

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հունիսի 2004 թվականի N 946-Ն

### ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել հյուրանոցային ծառայությունների մատուցելու հետևյալ կարգն ու պայմանները՝

ա) հյուրանոցային ծառայությունների մատուցման որակը պետք է համապատասխանի նորմատիվ իրավական ակտերի և պայմանագրի պահանջներին,

բ) հյուրանոցային տնտեսության օբյեկտները կամավորության սկզբունքով կարող են ստանալ որակավորման կարգ,

գ) հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգ շնորհվում է սույն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան,

դ) որակավորման կարգ ունեցող հյուրանոցային տնտեսության օբյեկտների նյութատեխնիկական ապահովումը և մատուցվող ծառայությունների ցանկը պետք է համապատասխանեն շնորհված որակավորման կարգի պահանջներին,

ե) սույն որոշմամբ սահմանված որակավորման կարգերի պահանջների փոփոխության դեպքում որակավորման կարգ ունեցող հյուրանոցային տնտեսության օբյեկտների նյութատեխնիկական ապահովումը և ծառայությունները ենթակա են համապատասխանեցման որակավորման կարգի պահանջներին՝ դրանցում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից 90 օրվա ընթացքում:

(1-ին կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)

2. Հաստատել՝

ա) հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման ընթացակարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը՝ համաձայն NN 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 և 10 հավելվածների.

գ) հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման վկայականի ձևը՝ համաձայն N 11 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

### ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕՔՅԵԿՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման ընթացակարգը (այսուհետ՝ ընթացակարգ)՝ համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների:

2. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման հիմնական նպատակներն են՝

ա) մատուցվող հյուրանոցային ծառայությունների կայուն որակի ապահովումը.

բ) սպառողի՝ հյուրանոցային ծառայությունների ընտրությանն աջակցելը.

գ) հյուրանոցային տնտեսության օբյեկտների մրցունակության բարձրացմանն աջակցելը:

3. Հյուրանոցային տնտեսության օբյեկտները որակավորում է Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը (այսուհետ՝ որակավորող մարմին)՝ սույն ընթացակարգին և հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերին համապատասխան:

#### II. ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕՔՅԵԿՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱՐ ՆԵՐԿԱՅԱՑԱԿՈՂ ԱՆՀՐԱԺԵՇ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

4. Հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման կարգ ստանալու նպատակով իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) որակավորող մարմին է ներկայացնում հայտ, որտեղ նշվում են հյուրանոցային տնտեսության օբյեկտի տեսակն ու ակնկալվող որակավորման կարգը:

5. Հայտին կից ներկայացվում են՝

ա) *(«ա» ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)*

բ) հայտը ներկայացնելու պահից ոչ ավելի, քան 10 տարի առաջ ուժի մեջ մտած հյուրանոցային տնտեսության օբյեկտի շահագործման փաստագրման ակտը՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, տեխնիկական անձնագիրը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 1998 թվականի նոյեմբերի 25-ի N 168 հրամանին համապատասխան, կամ շահագործման ենթակա լինելը հավաստող այլ իրավական ակտ.

գ) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հրդեհային անվտանգության պահանջներին հյուրանոցային տնտեսության օբյեկտի համապատասխանության մասին հրդեհային անվտանգության բնագավառում լիազոր մարմնի եզրակացություն՝ տրված ոչ շուտ, քան հայտը ներկայացնելու պահից 10 օր առաջ.

դ) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի եզրակացությունը սանիտարահամաձարակային անվտանգության ապահովվածության մասին՝ տրված ոչ շուտ, քան հայտը ներկայացնելու պահից 10 օր առաջ.

ե) հյուրանոցային տնտեսության օբյեկտ հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ հայտատուի սեփականության կամ օգտագործման վկայականի պատճենը:

*(5-րդ կետը խմբ., լրաց. 02.08.07 N 873-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն)*

#### III. ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕՔՅԵԿՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ

6. Հայտն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում որակավորող մարմինը քննարկում է այն և ընդունում որակավորման գործընթացը շարունակելու կամ հայտը մերժելու մասին որոշում:

7. Քննարկման արդյունքում որակավորող մարմինը մերժում է հայտը, եթե՝

ա) բացակայում է սույն ընթացակարգի 5-րդ կետով նախատեսված փաստաթղթերից առնվազն մեկը և սույն ընթացակարգի 9-րդ կետով սահմանված ժամկետում չի վերացվել թերությունը.

բ) ներկայացված փաստաթղթերն ակնհայտորեն խեղաթյուրված են կամ կեղծիք են պարունակում.

գ) սույն ընթացակարգի 9-րդ կետում նշված դեպքում հայտատուն սահմանված ժամկետում չի վերացրել թերությունները.

դ) ներկայացված փաստաթղթերից պարզվում է, որ հյուրանոցային տնտեսության օբյեկտը ենթակա չէ շահագործման կամ հյուրանոցային տնտեսության օբյեկտում ապահովված չէ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հրդեհային անվտանգության կամ սանիտարական պահանջների կատարումը.

ե) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, կամ փաստաթղթերը ներկայացվել են սույն ընթացակարգով սահմանված ժամկետների խախտմամբ:

**(7-րդ կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)**

8. Որակավորող մարմինը հայտի մերժման մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ նշելով մերժման հիմքերը:

9. Հայտում կամ ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ և այլ նման բացթողումներ) առկայության դեպքում որակավորող մարմինը հայտն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում դրա մասին պատշաճ ձևով նախազգուշացնում է հայտատուին՝ հաջորդող 5 օրվա ընթացքում թերությունները վերացնելու համար:

10. Որակավորման գործընթացը շարունակվում է, եթե՝

ա) սույն ընթացակարգի 9-րդ կետում նշված ժամկետում որակավորող մարմինը հայտատուին չի ծանուցել ոչ էական թերությունների մասին.

բ) սույն ընթացակարգի 9-րդ կետում նշված ծանուցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում հայտատուն վերացրել է թերությունները:

11. Սույն ընթացակարգի 10-րդ կետում նշված դեպքում՝ օրենքով նախատեսված պահանջներին և սույն ընթացակարգով սահմանված ու հայտում նշված որակավորման կարգի պահանջներին, արտաքին ու ներքին հարդարման, սարքավորումների և մատուցվող ծառայությունների առումով միջազգայնորեն ընդունված որակավորման պահանջներին (այսուհետ՝ որակավորման պայմաններ) հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման պայմանների համապատասխանության գնահատման նպատակով որակավորող մարմինն ստեղծում է գնահատող հանձնաժողով (այսուհետ՝ գնահատող հանձնաժողով) և նշանակում գնահատող հանձնաժողովի նախագահին:

12. Գնահատող հանձնաժողովի նախագահը կազմակերպում և ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքը:

13. Գնահատող հանձնաժողովը բաղկացած է 9 անդամից և իր կազմում ընդգրկում է ներկայացուցիչներ՝

ա) որակավորող մարմնի համապատասխան ստորաբաժանումներից,

բ) հյուրանոցային կամ զբոսաշրջային ծառայությունների բնագավառում՝ մասնագիտական որակավորում կամ աշխատանքային փորձ ունեցող անձանցից, որոնք ներկայացված կլինեն հյուրանոցային կամ զբոսաշրջային ոլորտները ներկայացնող հասարակական կազմակերպությունների կամ իրավաբանական անձանց միությունների կողմից (համաձայնությամբ),

գ) քաղաքաշինության բնագավառում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնից,

դ) սանիտարահամաճարակային անվտանգության բնագավառում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնից,

ե) արտակարգ իրավիճակների բնագավառում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնից,

զ) տեղական ինքնակառավարման և այլ շահագրգիռ մարմիններից (համաձայնությամբ),

է) սպառողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններից (համաձայնությամբ),

ը) նկարիչների, ճարտարապետների և դիզայներների միություններից (համաձայնությամբ),

թ) օտար լեզվի համապատասխան մասնագետներից (համաձայնությամբ):

14. Գնահատող հանձնաժողովը՝

ա) սահմանում է հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման գնահատման ժամկետները՝ գնահատումն սկսվելուց առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով հայտատուին,

բ) գնահատում է որակավորման պայմաններին հյուրանոցային տնտեսության օբյեկտի համապատասխանությունը,

գ) տալիս է եզրակացություն որակավորման պայմաններին հյուրանոցային տնտեսության օբյեկտի համապատասխանության մասին:

14.1. Որակավորման պայմաններին հյուրանոցային տնտեսության օբյեկտի համապատասխանության գնահատումը հանձնաժողովն իրականացնում է տեղում:

**(14.1 կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)**

14.2. Սույն ընթացակարգի 14-րդ կետի «ա» և «գ» ենթակետերով նախատեսված հարցերը, այդ թվում՝ նաև գնահատման արդյունքները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումներ են ընդունվում գնահատող հանձնաժողովի նիստերում:

Գնահատող հանձնաժողովի նիստն իրավազոր է (քվորում ունի), եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

**(14.2 կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)**

15. Հանձնաժողովի նիստն արձանագրվում է:

Արձանագրությունը, որը ներառում է սույն ընթացակարգի 14-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված եզրակացությունը, կազմվում է 3 օրինակից և ստորագրվում հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կողմից:

**(15-րդ կետը խմբ. 02.08.07 N 873-Ն)**

16. Գնահատող հանձնաժողովի կողմից եզրակացության հաստատման մասին որոշումն ընդունվում է հանձնաժողովի նիստին մասնակցած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

**(16-րդ կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)**

17. Գնահատող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք, ընդ որում, ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

18. Գնահատող հանձնաժողովը եզրակացությունն ընդունելիս՝ հաշվի է առնում սույն ընթացակարգի IV գլխում նշված թույլատրելի շեղումները:

19. Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է հայտատուին, որն այն ստանալու փաստը հաստատում է իր ստորագրությամբ՝ արձանագրության մյուս օրինակների վրա: Արձանագրության մյուս 2 օրինակները հանձնվում են որակավորող մարմնին:

20. Գնահատող հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում՝ որակավորող մարմինը եզրակացությունն ստանալուց հետո 7 օրվա ընթացքում ընդունում է հայտը բավարարելու և հյուրանոցային տնտեսության օբյեկտին համապատասխան որակավորման կարգ շնորհելու մասին որոշում և հայտատուին հանձնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 946-Ն որոշմամբ սահմանված որակավորման վկայական:

Հայտատուի դիմումով սույն կետով նախատեսված որակավորման վկայականը կարող է տրվել նաև այլ լեզվով:

**(20-րդ կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)**

21. Որակավորման վկայականը տրվում է 5 տարի ժամկետով:

22. Գնահատող հանձնաժողովի բացասական եզրակացության դեպքում որակավորող մարմինը մերժում է հայտը, եթե՝

ա) հայտատուն արձանագրությունն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում գրավոր չի ծանուցել որակավորող մարմնին և գնահատող հանձնաժողովին անհամապատասխանությունները վերացված լինելու մասին, կամ՝

բ) սույն կետի «ա» ենթակետով նախատեսված ծանուցումից հետո կատարված գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի եզրակացությունը կրկին բացասական է:

**(22-րդ կետը խմբ. 02.08.07 N 873-Ն)**

23. Որակավորող մարմինը մերժման մասին որոշումն ընդունելուց հետո 3-օրյա ժամկետում դրա մասին պատշաճ ձևով ծանուցում է հայտատուին՝ ծանուցման մեջ նշելով մերժման հիմքերը:

24. Որակավորման կարգ ստանալու մասին հայտի մերժման վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

25. Սույն ընթացակարգով նախատեսված որակավորման կարգ ունեցող հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման կարգը կարող է փոփոխվել կամ որակավորման վկայականի գործողությունը կարող է երկարաձգվել հյուրանոցային ծառայություններ մատուցող անձի հայտի հիման վրա՝ սույն ընթացակարգին համապատասխան:

Որակավորման վկայականի գործողությունը երկարաձգելու մասին հայտը ներկայացվում է որակավորման վկայականի գործողության ժամկետի ավարտից առնվազն 3 ամիս առաջ:

**(25-րդ կետը խմբ. 02.08.07 N 873-Ն)**

26. Սույն ընթացակարգի 25-րդ կետով նախատեսված դեպքերում հայտին կից կարող են չներկայացվել սույն ընթացակարգի 5-րդ կետի «ա», «բ» և «ե» ենթակետերով նախատեսված փաստաթղթերը, եթե գործող որակավորման կարգն ստանալու համար հայտին կից ներկայացված նույն փաստաթղթերում փոփոխություն չի կատարվել, կամ դրանց գործողությունը չի դադարել:

**(26-րդ կետը խմբ. 02.08.07 N 873-Ն)**

27. Որակավորման վկայականի գործողությունը դադարում է՝

ա) գործողության ժամկետի ավարտմամբ,

բ) որակավորման վկայականի գործողությունը դադարեցնելու մասին հյուրանոցային ծառայություններ մատուցող անձի դիմումով՝ դիմումը որակավորող մարմնում մուտքագրվելուն հաջորդող օրվանից, եթե հայտատուն դիմումում այլ ժամկետ չի նշել,

գ) որակավորող մարմնի որոշմամբ՝ սույն ընթացակարգով սահմանված հիմքերով:

**(27-րդ կետը խմբ. 02.08.07 N 873-Ն)**

#### **IV. ՈՐԱՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՑ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ**

28. Թույլատրվում են շեղումներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 946-Ն որոշմամբ հաստատված հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման համապատասխան կարգի պահանջներից, եթե հյուրանոցային տնտեսության օբյեկտն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում, որպես պատմամշակութային կամ ճարտարապետական հուշարձան, և հայտատուն, ի լրումն սույն ընթացակարգի 5-րդ կետի պահանջների, հայտին կից՝ որակավորող մարմին է ներկայացնում՝

ա) պատմամշակութային հուշարձանների պահպանության ոլորտի լիազոր մարմնի համապատասխան եզրակացությունն այն մասին, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 946-Ն որոշմամբ հաստատված հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման համապատասխան կարգի պահանջների կատարումն առանց շինության պատմամշակութային բնույթի խաթարման՝ հնարավոր չէ,

բ) տեղեկանք այն մասին, որ սույն ընթացակարգի 28-րդ կետով նախատեսված շեղումը, որը նվազեցրել է հայտով ակնկալվող հյուրանոցային տնտեսության օբյեկտի տեսակի և որակավորման

կարգի նկատմամբ պահանջների կատարումը, փոխհատուցվել է նույն որակավորման կարգի այլ պահանջների կատարմամբ՝ ավելի բարձր որակով և մակարդակով:

## **V. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՊԱՀՎՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐԱԺԱՍԿԵՏ ԴԱՂԱՐՈՒՄԸ**

29. Որակավորման պայմանների պահպանումն ապահովելու նպատակով որակավորող մարմինը պարբերաբար իրականացնում է որակավորման պայմաններին հյուրանոցային տնտեսության օբյեկտի համապատասխանության գնահատում (այսուհետ՝ պարբերական գնահատում):

***(29-րդ կետը խմբ. 02.08.07 N 873-Ն)***

29.1. Պարբերական գնահատումն իրականացվում է որակավորող մարմնի ղեկավարի հրամանով, որտեղ նշվում են պարբերական գնահատմանը մասնակցող անձի (անձանց) անունը, ազգանունը, պաշտոնը, պարբերական գնահատման ենթակա հյուրանոցային տնտեսության օբյեկտի անվանումը, պարբերական գնահատման ժամկետները:

***(29.1 կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)***

29.2. Պարբերական գնահատումն իրականացվում է առանց դրա մասին հյուրանոցային ծառայություններ մատուցող անձին նախազգուշացնելու:

***(29.2 կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)***

29.3. Պարբերական գնահատմանը մասնակցող անձը՝

ա) իրավունք ունի հյուրանոցային ծառայություններ մատուցող անձի ներկայացուցչի կամ աշխատակցի ներկայությամբ մուտք գործելու հյուրանոցային տնտեսության օբյեկտի այն մասերը, որոնք անհրաժեշտ են որակավորման պայմաններին հյուրանոցային տնտեսության օբյեկտի համապատասխանության գնահատումն իրականացնելու համար, պահանջելու և ստանալու պարբերական գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթեր,

բ) պարտավոր է չխոչընդոտել հյուրանոցային տնտեսության օբյեկտի բնականոն գործունեությանը:

***(29.3 կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)***

29.4. Հյուրանոցային ծառայություններ մատուցող անձը՝

ա) իրավունք ունի պարբերական գնահատում իրականացնող անձանցից պահանջելու չխոչընդոտել հյուրանոցային տնտեսության օբյեկտի բնականոն գործունեությանը, պարբերական գնահատում իրականացնող անձանց ներկայացնելու հիմնավորված առարկություններ սույն ընթացակարգին չհամապատասխանող գործողությունների վերաբերյալ, պարբերական գնահատմանը մասնակցող անձանց՝ սույն ընթացակարգին հակասող գործողությունները բողոքարկելու որակավորող մարմնին,

բ) պարտավոր է ապահովել պարբերական գնահատմանը մասնակցող անձանց մուտքը հյուրանոցային տնտեսության օբյեկտի այն մասերը, որոնք անհրաժեշտ են որակավորման պայմաններին հյուրանոցային տնտեսության օբյեկտի համապատասխանության գնահատումն իրականացնելու համար, տրամադրել գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթեր, պարբերական գնահատում իրականացնող անձանց պահանջով ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը պարբերական գնահատմանը, չխոչընդոտել պարբերական գնահատման գործընթացին:

***(29.4 կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)***

29.5. Պարբերական գնահատման արդյունքում կազմվում է արձանագրություն՝ 2 օրինակից, որում արձանագրվում են այն կազմելու անսաթիվը և տեղը, որակավորող մարմնի և հյուրանոցային տնտեսության օբյեկտի անվանումները, պարբերական գնահատմանը մասնակցող անձանց կազմը, պարբերական գնահատման ժամկետը և արդյունքները:

***(29.5 կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)***

29.6. Պարբերական գնահատման մասին արձանագրությունն ստորագրում են պարբերական գնահատում իրականացնող անձինք և հյուրանոցային ծառայություններ մատուցող անձի ղեկավարը կամ ներկայացուցիչը:

*(29.6 կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)*

29.7. Պարբերական գնահատման մասին արձանագրության մեջ արձանագրվում են նաև արձանագրությունն ստորագրելուց հյուրանոցային ծառայություններ մատուցող անձի ղեկավարի կամ ներկայացուցչի հրաժարվելը և արձանագրության մասին վերջիններիս առարկությունները՝ դրանց առկայության դեպքում:

*(29.7 կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)*

30. Պարբերական գնահատման ընթացքում որակավորման կարգի պահանջներին հյուրանոցային տնտեսության օբյեկտի անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում որակավորող մարմինն իր որոշմամբ նախազգուշացնում է հյուրանոցային ծառայություններ մատուցող անձին՝ առաջարկելով վերացնել հայտնաբերված անհամապատասխանությունը:

*(30-րդ կետը խմբ. 02.08.07 N 873-Ն)*

30.1. Որակավորող մարմինն իր որոշմամբ դադարեցնում է հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման վկայականի գործողությունը, եթե՝

ա) հյուրանոցային ծառայություններ մատուցող անձը սույն ընթացակարգի 30-րդ կետով նախատեսված նախազգուշացումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում գրավոր չի ծանուցում որակավորող մարմնին այն անհամապատասխանությունը վերացնելու մասին, որի համար նախազգուշացվել էր,

բ) սույն կետի «ա» ենթակետով նախատեսված ծանուցումն ստանալուց հետո կատարված գնահատման արդյունքում պարզվում է, որ սույն ընթացակարգի 30-րդ կետով նախատեսված որոշման մեջ նշված անհամապատասխանությունը վերացված չէ: Սույն կետով նախատեսված դեպքում գնահատում իրականացնելու համար որակավորող մարմնի ղեկավարի լրացուցիչ հրամանի առկայությունը պարտադիր չէ,

գ) հյուրանոցային տնտեսության օբյեկտը շահագործող անձի կողմից սույն ընթացակարգի 30-րդ կետով նախատեսված նախազգուշացումն ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին թույլ է տրվել որակավորման կարգի պահանջների խախտում,

դ) հյուրանոցային տնտեսության օբյեկտը շահագործող անձը խոչընդոտում է պարբերական գնահատմանը:

*(30.1 կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)*

30.2. Որակավորող մարմնի որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:

*(30.2 կետը լրաց. 02.08.07 N 873-Ն)*

*(V-րդ գլուխը խմբ. 02.08.07 N 873-Ն)*

## **VI. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՆՇԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

31. Հյուրանոցային ծառայություններ մատուցող անձը որակավորման կարգի օգտագործման իրավունք ստանում է համապատասխան որակավորման վկայականի առկայության դեպքում:

32. Հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման կարգի գրաֆիկական պատկերը՝ ցանկացած չափի համապատասխան հնգաթև աստղերն են կամ ցանկացած չափի հռոմեական թվանշանները:

33. Որակավորման վկայականով հավաստված որակավորման կարգին համապատասխանող նշաններն ամրագրվում են կոշտ հիմքի վրա, որի վրա հայերեն, իսկ հյուրանոցային ծառայություններ մատուցող անձի ցանկությամբ՝ նաև այլ լեզվով նշվում է հյուրանոցային տնտեսության օբյեկտին որակավորման կարգ շնորհող որակավորող մարմնի անվանումը:

*(33-րդ կետը լրաց., փոփ. 02.08.07 N 873-Ն)*

34. Որակավորման կարգի նշանները տեղադրվում են հյուրանոցային տնտեսության օբյեկտի գլխավոր մուտքին հարակից պատին և ընդունելության սրահում:

35. Որակավորման կարգի նշանները կարող են օգտագործվել հյուրանոցային տնտեսության օբյեկտի խորհրդանիշի, ցուցանակի, փաստաթղթերի (պաշտոնական ձևաթղթեր, անդորրագրեր, հյուրի քարտեր և այլն), օբյեկտի ներքին և արտաքին ձևավորման ժամանակ, ինչպես նաև գովազդային նպատակներով (գովազդային պրակներ, զանգվածային լրատվության միջոցներով գովազդներ և այլն):

36. Որակավորող մարմինը համաձայն հյուրանոցային տնտեսության օբյեկտների առանձին տեսակների, վարում է որակավորման կարգ ստացած հյուրանոցային տնտեսության օբյեկտի գրանցամատյան, որը բաց է հանրության համար:



Կ Ա Ր Գ

ՀՅՈՒՆԱՆՈՑՆԵՐԻ ԵՎ ՄՈԹԵԼՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

N/N ը/կ	Նվազագույն պահանջները	Կարգերը										
		****		****		***		**		*		
		<	Մ	<	Մ	<	Մ	<	Մ	<	Մ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1.	Օբյեկտը հանդիսանում է առանձին շինություն կամ շինության առանձնացված մաս կամ շինությունների համալիր	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
2.	Շինության առանձին մասերը պետք է միացված լինեն իրար ստացիոնար կառուցված անցումներով՝ օբյեկտի բոլոր ծառայությունների հասանելիությունը ապահովելու համար:  Չի վերաբերում քաղաքների վարչական տարածքներից դուրս գտնվող օբյեկտներին: I. Արտաքին բարեկարգման տարրեր	+		+		+						
3.	Ղեկի ընդունելության նախասրահ տանող ուղղակի մուտք, որը պետք է պաշտպանված լինի սառը օդի ներխուժումից	+	+									
4.	Ղեկի ընդունելության նախասրահ տանող մուտքը պետք է հարմարեցված լինի հաշմանդամների տեղաշարժման համար	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
5.	Գլխավոր մուտքի վրա ծածկ, որոնախորշում գտնվող մուտք կամ ավտոմատ եղանակով գործող դռներ	+	+	+	+	+	+					
6.	Ավտոմեքենաների համար օբյեկտի մուտքի վրա ծածկ՝ 4,5 մ բարձրությամբ  Չի վերաբերում այն հյուրանոցներին, որոնք գտնվում են քաղաքային խիտ կառուցապատման գոտում և առկա է տեղական ինքնակառավարման մարմնի (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետի) համապատասխան եզրակացությունը	+	+	+								
7.	Առանձնացված մուտք ու ճանապարհի հյուրերի ուղեբեռի համար	+	+									
8.	Մատակարարման համար առանձնացված ճանապարհ  Չի վերաբերում *** հյուրանոցներին, որոնք գտնվում են քաղաքային խիտ կառուցապատման մեջ	+	+	+	+	+	+					
9.	Օբյեկտի շրջակայքը պետք է լինի բարեկարգված, պետք է ունենա ավտոմեքենաների և հետիոտների համար կոշտ ծածկով ճանապարհներ և արահետներ, դեկորատիվ կանաչապատում ու կանաչ գոտի՝ համապատասխան արտաքին լուսավորությամբ: Օբյեկտի շրջակայքում տնտեսական մասի առկայության դեպքում այն պետք է առանձնացված լինի հյուրերի համար հասանելի մասից: Քաղաքների վարչական տարածքներում գտնվող **** և **** օբյեկտների շենքերը պետք է զեղարվեստական արտաքին լուսավորում ունենան: Կանաչ գոտու առկայությունը չի վերաբերում քաղաքների վարչական տարածքներում գտնվող ***-ից * օբյեկտներին:	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
10.	Հսկվող ավտոտնակներ կամ ավտոկայանատեղեր, իսկ մոթելների համար՝ մեքենաները կանգնեցնելու համար նախապես ապահովված տեղեր:  Ընդ որում, 100 և ավելի ննջատեղ ունեցող **** հյուրանոցները պետք է ապահովված լինեն 15, **** հյուրանոցները՝ 10, իսկ *** հյուրանոցները՝ 6 մեքենայի տեղերով:  Չի վերաբերում այն հյուրանոցներին, որոնք գտնվում են քաղաքային խիտ կառուցապատման մեջ: Այդ դեպքում պետք է ապահովվել ավտոմեքենաներ կանգնեցնելու տեղեր հյուրերի ժամանման և մեկնման ընթացքում:	+	+	+	+	+						
11.	Օբյեկտին կից ավտոտնակներում կամ ավտոկայանատեղերում պետք է ապահովված տեղեր լինեն բոլոր թ/մ-ների համար II. Տեխնիկական սարքավորումներ և հարմարանքներ							+		+		+
12.	Հանրամատչելի մասերում՝ ներառյալ ընդունելության սրահը, հասարակական սննդի և բազմաֆունկցիոնալ սրահներն ու դահլիճները՝ 1) օդակարգավորում կամ այլ սարքավորումների և համակարգերի միջոցով օդափոխության, օդի 18-21° ջերմաստիճանի և 45-60 % խոնավության ապահովում և պահպանում 2) մեխանիկական օդափոխում - 1/ 3) գրավիտացիոն կամ մեխանիկական օդափոխում	+	+	+	+							
13.	Բնակելի մասում - թ/մ՝ 1) օդակարգավորում կամ այլ սարքավորումների և համակարգերի միջոցով օդափոխության, օդի 18-21° ջերմաստիճանի և 45-60 % խոնավության ապահովում և պահպանում 2) գրավիտացիոն կամ մեխանիկական օդափոխում	+	+	+	+	+						
								+	+	+	+	+

14.	Արտաքաշող մեխանիկական օդափոխում ս.հ.հ-ում: * * և * օբյեկտներում թույլատրվում է գրավիտացիոն օդափոխում, եթե ս.հ.հ-ները ապահովված են կենտրոնացված տաք ջրամատակարարմամբ և ունեն պատուհաններ կամ ս.հ.հ-ի խցիկի ծավալը գերազանցում է 6,5 խ/մ-ը:	+	+	+	+	+	+	+	+	+	+
15.	Ջեռուցում ամբողջ օբյեկտում կամ դրա չօրակարգավորվող մասում  ****, *** և *** օբյեկտներում պետք է ապահովվի կենտրոնացված ջեռուցում	+	+	+	+	+	+	+	+	+	+
16.	Գործող պահանջներին համապատասխանող որակի տաք և սառը ջրի շուրջօրյա ջրամատակարարում  <i>(Պարբերություն ուժը կորցրել է 02.08.07 N 873-Ն)</i>  ****-ից * օբյեկտների ջրամատակարարման տեխնիկական հնարավորություններից կախված թույլատրվում է շուրջօրյա ջրամատակարարումն ապահովել այլընտրանքային միջոցներով (օրինակ՝ հատուկ տարողություններում կուտակված խմելու ջրի հաշվին)  ****, *** և *** օբյեկտներում տաք ջրամատակարարումը պետք է ապահովվի կենտրոնացված տաք ջրամատակարարման համակարգով	+	+	+	+	+	+	+	+	+	+
17.	Լրացուցիչ ձայնամեկուսացում **** և **** օբյեկտների ք/մ-ներում և կոնֆերենց դահլիճներում	+	+	+	+						
18.	Տարածքների բնույթին հարմարեցված ներքին լուսավորություն	+	+	+	+	+	+	+	+	+	+
19.	Հյուրերին հասանելի հեռախոս և ֆաքս՝ ընդունելության սրահում	+	+	+	+	+	+	+	+	+	+
20.	Սենյակներում կամ առանձնացված կետերում ինտերնետի օգտվելու հնարավորություն	+	+	+	+	+	+				
21.	Ռադիոհեռուստատեսային սարքավորումներ՝ հարմարեցված տեղական և արբանյակային ծրագրերի ընդունման համար	+	+	+	+	+	+				
22.	Մարդատար վերելակներ (հնարավոր է շարժասանդուղքներ)	+	+	+	+	+	+				
	1) գրո հարկից ցածր հարկերում գտնվող բոլոր սպասարկման տարածքներում (ավտոտնակներ, կենսավերականգնողական համալիր)										
	2) մեկ հարկից բարձր շինությունում՝ հյուրերի համար նախատեսված մասում	+	+								
	3) երկու հարկից բարձր շինությունում՝ հյուրերի համար նախատեսված մասում			+	+						
	4) երեք հարկից բարձր շինությունում՝ հյուրերի համար նախատեսված մասում					+	+				
	5) չորս հարկից բարձր շինությունում՝ հյուրերի համար նախատեսված մասում							+	+	+	+
23.	Առանձին բեռնատար վերելակ՝ այն քանակի մարդկանց համար, որքան նախատեսված է տվյալ օբյեկտի մարդատար վերելակի համար	+	+	+	+						
24.	Շուրջօրյա էներգամատակարարում ա) երկկողմանի էներգամատակարարում և վթարային գեներատոր բ) վթարային գեներատոր	+	+	+	+	+	+	+	+	+	+
	III. Օբյեկտի գործարկմանը, սպասարկմանը վերաբերվող հիմնական տարրեր								+	+	+
25.	Ընդունելության սրահ 1) Մինչև 50 ք/մ-ի համար նվազագույն մակերեսի չափը՝ ք/մ-ով 2) 50 ք/մ-ից բարձր յուրաք. 1 ք/մ-ի համար լրացուցիչ	50	50	30	30	20	20	20	20	10	10
		0,8	0,8	0,5	0,5	0,3	0,3	0,2	0,2	0,1	0,1
26.	Հանրային սննդի համալիր դահլիճ՝ 50 ք/մ-ից ավելի ք/մ ունեցող օբյեկտներում	+	+								
27.	Հանրամատչելի մասում՝ սանիտարահիգիենիկ համալիր՝  Նվազագույն հարմարանքներ 1) լվացարաններ՝ սեղանով կամ դարակով 2) յուրաքանչյուր լվացարանի վերևում հայելի՝ վերին կամ կողային լուսավորմամբ 3) հեղուկ օձառ 4) զուգարանի թուղթ 5) աղբարկղ 6) ձեռքերը չորացնելու համար էլ. սարք կամ մեկանգամյա օգտագործման սրբիչներ 7) պատի կախիչներ 8) զուգարան (****, *** և *** օբյեկտներում կանանց և տղամարդկանց համար առանձին) 9) միզարան՝ տղամարդկանց զուգարանում										
	IV. Բնակելի մաս										
28.	Համարի բնակելի մակերեսը՝ ք/մ-ով (առանց առանձնացված ս.հ.հ-ի, նախասրահների, սյուների և այլն)										
	1) 1-տեղանոց համար	14	14	12	12	10	10	9	9	8	8
	2) 2- տեղանոց համար	18	18	16	16	14	14	12	12	10	10
	3) 3- տեղանոց համար					16	16	16	15	15	14
	4) 4-տեղանոց համար								18	18	16



	1) ա) ջեռուցման մարտկոցով և ցնցուղով լողարան կամ ցնցուղախցիկ	+	+	+	+						
	բ) ցնցուղով լողարան կամ ցնցուղախցիկ					+	+	+	+	+	+
	2) սեղանով կամ դարակով լվացարան՝ վերին կամ կողային լուսավորությամբ	+	+	+	+	+	+	+	+	+	+
	3) զուգարան	+	+	+	+	+	+	+	+	+	+
34.	Լրացուցիչ սարքավորումներ՝										
	1) լողարանի կամ ցնցուղի վարագույր	+	+	+	+	+	+	+	+		
	2) անհատական փոքրիկ սրբիչ ուղեբերի համար՝ լողարանի (ցնցուղախցիկի) առջև	+	+	+	+	+	+				
	3) օձառաման, թղթի աման, կախիչներ, սրբիչների կախիչներ, լողարանի և ցնցուղի մոտ բռնակներ	+	+	+	+	+	+	+	+	+	+
	4) հայելի՝ վերին կամ կողային լուսավորությամբ	+	+	+	+	+	+	+	+	+	+
	5) մեկուսիչ կափարիչով վարդակ	+	+	+	+	+	+	+	+	+	+
	6) վարսահարդարիչ	+	+	+	+						
	7) հատակադիր կշեռք	+	+								
	8) ա) փակվող աղբաման (չիրկիզվող կամ դժվար հրկիզվող)	+	+								
	բ) աղբաման (չիրկիզվող կամ դժվար հրկիզվող)			+	+	+	+	+	+	+	+
	9) հեռախոս	+	+								
	10) մեկ անձի համար նվազագույն լրակազմ										
	ա) ձեռքի օձառ կամ հեղուկ օձառ	+	+	+	+	+	+	+	+	+	+
	բ) զուգարանի թուղթ	+	+	+	+	+	+	+	+	+	+
	գ) սրբիչ	+	+	+	+	+	+	+	+	+	+
	դ) բաղնիքի սրբիչ	+	+	+	+	+	+	+	+	+	+
	ե) բաղնիքի խալաթ	+	+								
	զ) բաղնիքի մեկանգամյա օգտագործման հողաթափեր	+	+								
	է) բաժակ	+	+	+	+	+	+	+	+	+	+
	ը) հիգիենիկ պարկ	+	+	+	+	+	+	+	+	+	+
35.	Լրիվ սանիտարահիգիենիկ հանգույցով սենյակների (նվազագույն) տոկոսը՝ նորակառույց օբյեկտներում՝ 100 %՝ առանց հաշվի առնելու օբյեկտի կարգը	100	100	100	100	100	100	50	50	25	10
36.	Ընդհանուր սանիտարահիգիենիկ սարքավորումներ բնակելի մասում										
	1) քնելու տեղերի քանակը ս.հ.հ չունեցող համարներում՝ յուրաքանչյուր սարքի դիմաց										
	ա) սեղանով կամ դարակով լվացարան							5	5	5	5
	բ) ցնցուղով լողարան կամ ցնցուղախցիկ							10	10	15	15
	գ) զուգարան՝ լվացարաններով (առնվազն մեկ հատ կանանց համար և մեկ հատ տղամարդկանց համար) Կանանց զուգարանում վերընթաց ցնցուղով լվացարան (բիդե)՝ 50 քնելու տեղի դիմաց՝ մեկ հաշվարկով, բայց ոչ պակաս քան մեկ հատ							10	10	12	12
	2) Լրացուցիչ սարքավորումներ										
	ա) հայելի							+	+	+	+
	բ) հեղուկ օձառ							+	+	+	+
	գ) զուգարանի թուղթ										
	դ) ձեռքերը չորացնելու էլ. սարք կամ մեկանգամյա օգտագործման սրբիչ							+	+	+	+
	ե) չիրկիզվող կամ դժվար հրկիզվող աղբաման							+	+	+	+
	զ) պատի կախիչներ							+	+	+	+
	V. Հիմնական և լրացուցիչ ծառայություններ										
37.	Հյուրերի ընդունման և տեղեկատվության տրամադրման ծառայություն.										
	ա) շուրջօրյա	+	+	+	+	+	+				
	բ) առնվազն 16 ժամ							+	+		
	գ) առնվազն 12 ժամ									+	+
38.	ա) հյուրերի համար տաք ըմպելիքների շուրջօրյա վաճառք	+	+	+	+						
	բ) հյուրերի համար տաք ըմպելիքների շուրջօրյա վաճառք: Թույլատրվում է ավտոմատներից վաճառքը փոխարինել ընդունելության սրահում վաճառքով					+	+	+	+	+	+
39.	Արթնացման ծառայություն	+	+	+	+	+	+	+	+	+	+
40.	Սպասարկող անձնակազմի կանչ										
	ա) ուղիղ հեռախոսակապ	+	+								
	բ) կանչի կոճակ կամ ներքին հեռախոսակապ				+	+	+	+			
41.	Համարում սննդի մատուցման սպասարկումը կատարվում է՝										
	1) շուրջօրյա	+	+	+	+						
	2) առնվազն 12 ժամ					+	+				
42.	Ուղեբեռի սպասարկման ծառայություն	+	+	+	+	+	+				
43.	Հյուրերի ուղեբեռի պահպանությունը, ինչպես նաև համարը զբաղեցնելու ընթացքում հյուրերի դրամական միջոցների և թանկարժեք իրերի պահպանությունը գործում է շուրջօրյա	+	+	+	+	+	+	+	+	+	+
44.	Ծաղիկները հասցեատիրոջը հասցնելու հնարավորություն	+	+	+	+	+					
45.	Արվեստի ցուցասրահ՝ վաճառքի հնարավորությամբ	+									
46.	ա) տառադրամի փոխանակում	+	+	+	+	+	+				

	Պահանջը պարտադիր չէ *** այն օբյեկտների համար, որոնցից առավելագույնը 100 մ հեռավորության վրա տարադրամի փոխանակման կետ կա												
	բ) բանկային պլաստիկ քարտերի սպասարկում՝ օբյեկտի ամբողջ տարածքում	+	+	+	+	+	+						
47.	Անենօրյա լրագրերի վաճառք կամ հասանելիություն	+	+	+	+	+	+						
48.	Անձնական հիգիենայի պարագաների վաճառք	+	+	+	+	+	+						
49.	Առաջին օգնության հնարավորություն, շտապ օգնության կանչ, դեղարկղիկ:	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	
50.	Հանրային սննդի ծառայություններ												
	1) ռեստորան	+	+	+	+	+	+						
	*** հյուրանոցում և *** մոթելում թույլատրվում է ռեստորանի բացակայություն, եթե օբյեկտից առավելագույնը 200 մ հեռավորության վրա ռեստորան կա												
	2) բար	+	+	+	+	+	+	+	+				
	**** հյուրանոցում և **** մոթելում շուրջօրյա գործող բար												
	3) նախաճաշի մատուցում	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	
51.	Բազմաֆունկցիոնալ դահլիճ, որը հարմարեցված է օբյեկտի բնույթին՝ համաժողովների, ակումբային, ուսումնական և այլ միջոցառումներ անցկացնելու համար	+		+									
52.	Հանգստյան գոտիներում գտնվող օբյեկտներում՝ հյուրերի անձնական մարզական գույքի պահպանում	+		+			+			+			
53.	Վերականգնողական հանգստյան համալիր												
	1) լողավազան	+	+										
	2) լողավազան, շոգեբաղնիք, սոլյարի, մերսում և այլ վերականգնողական ծառայություններ (ծառայության առնվազն 2 տեսակ): Սույն պահանջը վերաբերում է *** այն օբյեկտներին, որոնք գտնվում են հանգստյան գոտիներում	+	+	+	+	+	+						
54.	Ակումբային դահլիճ՝ հեռուստացույցով							+	+	+			
	չի վերաբերում այն օբյեկտներին, որոնք ունեն բազմաֆունկցիոնալ դահլիճներ												
55.	Հանրամատչելի տեղերում հեռուստացույց դիտելու հնարավորություն										+	+	+
56.	Հյուրերի ավտոմեքենաների սպասարկում			+		+		+			+		+
57.	Հյուրերի սպիտակեղենի և հագուստի լվացք, արդուկ և մաքրման ծառայություն	+	+	+	+	+	+						
	Անկողնու և սրբիչների փոխելը նորով՝												
	1) ամեն օր կամ հյուրերի ցանկությամբ	+	+	+	+								
	2) 3 օրը մեկ կամ հյուրերի ցանկությամբ							+	+	+	+	+	+
	VI. Անձնակազմի մասնագիտական որակավորում												
	Կրթություն.												
58.	Հյուրանոցային օբյեկտի ղեկավարը պետք է ունենա՝	+	+	+	+	+	+						
	ա) բարձրագույն կրթություն, կամ՝												
	բ) միջին մասնագիտական կրթություն հյուրանոցային գործի բնագավառում կամ՝	+	+	+	+	+	+						
	գ) մասնագիտական դասընթացի որակավորում հյուրանոցային գործի բնագավառում կամ՝	+	+	+	+	+	+						
	դ) 5 տարվա վարչական աշխատանքային փորձ հյուրանոցային գործի բնագավառում	+	+	+	+	+	+						
59.	Ընդունման սրահի անձնակազմ												
	1.Կրթությունը.												
	ա) բարձրագույն կրթություն կամ՝	+	+	+	+	+	+						
	բ) միջին մասնագիտական կրթություն հյուրանոցային գործի բնագավառում կամ՝	+	+	+	+	+	+						
	գ) միջնակարգ կրթություն և մասնագիտական դասընթացի որակավորում (առնվազն 60 ժամ), կամ՝	+	+	+	+	+	+						
	դ) հյուրանոցային գործի բնագավառում 2 տարվա աշխատանքային փորձ	+	+	+	+	+	+						
	2. Առնվազն 2 օտար լեզվի տիրապետում՝ անգլերենը պարտադիր	+	+	+	+	+	+						
60.	Մատուցողներ, համարների սպասավորներ, դռնպան, բեռնակիրներ՝												
	1) միջին մասնագիտական կրթություն կամ մասնագիտական դասընթացի որակավորում	+	+	+	+								
	2) առնվազն 2 օտար լեզվի տիրապետում՝ տարրական ծավալով՝ անգլերենը պարտադիր	+	+	+	+								
	VII. Այլ պահանջներ												
61.	Հյուրանոցային յուրաքանչյուր ծառայության անձնակազմի համար առանձին համազգեստ	+	+	+	+	+	+						

**Նշանների և հապավումների բացատրություն՝**

<	հյուրանոց
Մ	մոթել
*	մեկ աստղանի կարգ
**	երկու աստղանի կարգ
***	երեք աստղանի կարգ
****	չորս աստղանի կարգ

\*\*\*\*\*  
 + պարտադիր պահանջ  
 p/մ բնակելի միավոր  
 u.h.h սանիտարահիգիենիկ հանգույց  
 -1/ մեխանիկական օդափոխումը պետք է ապահովի ամբողջ օբյեկտի օդափոխությունը՝ գործող պահանջներին համապատասխան, ինչպես նաև հոստերի կլանումը: \*\*\* հյուրանոցների բազմաֆունկցիոնալ դահլիճներում պահանջվում է օդակարգավորում  
 -2/ թույլատրվում են երկֆունկցիոնալ տարրեր

(Հավելվածը լրաց., փոփ., խմբ. 02.08.07 N 873-Ն)

Հայաստանի Հանրապետության  
 կառավարության աշխատակազմի  
 ղեկավար-նախարար

Մ. Թովույան

Հավելված N 3  
 ՀՀ կառավարության 2004 թվականի  
 հունիսի 10-ի N 946-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՅՈՒՐԱՆՑԱՏԻՊ ՀԱՆԳՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՌՈՂՋԱՐԱՆՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

N/N ը/կ	Նվազագույն պահանջները	Կարգերը								
		****		***		**		*		
		</<	Ա	</<	Ա	</<	Ա	</<	Ա	
1	2	3	4	5	6	7	8	9	10	
1.	Օբյեկտը հանդիսանում է առանձին շինություն կամ շինության առանձնացված մաս Օբյեկտը հանդիսանում է առանձին շինություն կամ շինության առանձնացված մաս: Թույլատրվում է, որ բնակելի մասը գտնվի առանձնացված մասնաշենքում՝ հաճախորդներին օբյեկտի բոլոր ծառայությունները հասանելի դարձնելու պայմանով:	+	+	+	+					
	I. Արտաքին բարեկարգման տարրեր									
2.	Դեպի ընդունելության նախասրահ տանող ուղղակի մուտք, որը պետք է պաշտպանված լինի սառը օդի ներխուժումից	+	+							
3.	Մատակարարման համար առանձնացված ճանապարհ	+	+							
4.	Օբյեկտի շրջակայքը պետք է լինի բարեկարգված, պետք է ունենա ավտոմեքենաների և հետիոտների համար կոշտ ծածկով ճանապարհներ և արահետներ, դեկորատիվ կանաչապատում ու կանաչ գոտի՝ համապատասխան արտաքին լուսավորությամբ: Օբյեկտի շրջակայքում տնտեսական մասի առկայության դեպքում այն պետք է առանձնացված լինի հյուրերի համար հասանելի մասից:  Կանաչ գոտու առկայությունը չի վերաբերվում քաղաքների վարչական տարածքներում գտնվող ***-ից * օբյեկտներին:	+	+	+	+	+	+		+	+
5.	Հսկմող ամտոտնաններ կամ ամտոնաւանաւտեղեղ:	+	+	+	+					



	7) պատի կախիչներ	+	+	+	+	+	+		+	+
	8) զուգարան	+	+	+	+	+	+		+	+
	9) միզարան՝ տղամարդկանց զուգարանում	+	+	+	+	+	+		+	+
	IV. Բնակելի մաս									
18.	Համարի բնակելի մակերեսը՝ ք/մ-ով (առանց առանձնացված ս.հ.հ-ի, նախասրահների, սյուների և այլն)									
	1) 1-տեղանոց համար	12	12	10	10	9	9		8	8
	2) 2-տեղանոց համար	16	16	14	14	12	12		10	10
	3) 3-տեղանոց համար			16	16	15	15		14	14
	4) 4-տեղանոց համար					18	18		16	16
	5) 4-ից բարձր տեղանոց համարում՝ 4 տեղանոց համարի մակերեսին լրացուցիչ ավելացվում է յուրաքանչյուր հաջորդ տեղի համար հետևյալ մակերեսը՝ ք/մ-ով: Թույլատրվում է շեղում՝ համարի բնակելի մակերեսի մինչև 10 %-ի չափով, որը փոխհատուցվում է ք/մ-ի մնացած մասերի մակերեսով և կահավորման ֆունկցիոնալ գործածությամբ								4	4
19.	Լյուքս կարգի համարը ներառում է առնվազն 25 քմ բնակելի մակերեսով հյուրասենյակ, ննջարան՝ լողարանով, մուտքի մասում առանձնացված լրացուցիչ զուգարան:	+	+							
	1. Կահույքով և լրացուցիչ տարրերով ք/մ-ի հագեցվածություն									
20.	Կահավորման լրակազմ (****-*** օբյեկտներում թույլատրվում է բազմաֆունկցիոնալ կահույք)									
	1) մեկ տեղանոց մահճակալ՝ 90 x 200 սմ նվազագույն չափով	+	+	+	+	+	+		+	+
	2) 2 տեղանոց մահճակալ՝ 140 x 200 սմ նվազագույն չափով	+	+	+	+	+	+		+	+
	3) փոքրիկ սեղան կամ դարակ՝ քնելու յուրաքանչյուր տեղի մոտ	+	+	+	+	+	+		+	+
	4) զգեստապահարան կամ որմնախորշի մեջ սարքված պահարան՝ կախիչներով (յուրաքանչյուր հյուրի համար առնվազն 5 կախիչ)	+	+	+	+	+	+		+	+
	5) գրասեղան կամ սեղան	+	+	+	+	+	+		+	+
	6) ուղեբեռի պահարան կամ տակդիր	+	+	+	+	+	+		+	+
	7) այթո կամ նստելու համար որևէ այլ կահույք (1 միավոր յուրաքանչյուր անձի համար, սակայն ոչ պակաս, քան 2 միավոր յուրաքանչյուր համարում)	+	+	+	+	+	+		+	+
	8) փոքր սեղան	+	+	+	+					
	9) բազկաթոռ՝ առնվազն 2 հատ կամ բազմոց	+	+							
	10) հայելի	+	+	+	+	+	+		+	+
21.	Լուսավորություն									
	1) յուրաքանչյուր մահճակալի մոտ գիշերային լամպ	+	+	+	+	+	+		+	+
	2) աշխատատեղը (սեղանը կամ գրասեղանը) լուսավորող լամպ	+	+	+	+	+	+			
	3) ընդհանուր լուսավորություն	+	+	+	+	+	+		+	+
22.	Լրացուցիչ սարքավորումներ՝ յուրաքանչյուր ք/մ-ի համար									
	1) հեռախոս	+	+	+	+					
	2) հեռուստացույց	+	+	+	+					
	3) ռադիոժրագրեր ընդունելու հնարավորություն	+	+	+	+	+	+			
	4) գորգ կամ գորգածածկ	+	+	+	+					
	5) մահճակալի առջև՝ առնվազն փոքր գորգ					+	+		+	+
	6) թափանցիկ վարագույր, կամ շերտավարագույր, կամ գալարավարագույր - 2/	+	+	+	+	+	+		+	+
	7) մթնեցնող ծանր վարագույր, կամ գալարավարագույր, կամ շերտավարագույր -2/	+	+	+	+	+	+		+	+
	8) դեկորատիվ տարրեր	+	+	+	+	+	+			
	9) օբյեկտի ծառայությունների, հյուրերի անվտանգության և տեղանքի վերաբերյալ տեղեկատվական նյութեր նաև գրասենյակային պարագաներ (ծրար, թուղթ, գրիչ, մատիտ)	+	+	+	+	+	+		+	+
	10) մոխրաման՝ ծխողների համար նախատեսված համարներում	+	+	+	+	+	+		+	+
	11) ձեռքերի և կոշիկների մաքուր համառ լուսանամ և	+	+	+	+					





	Ուղիղ հեռախոսակապ կամ կանչի կոճակ	+	+						
33.	Ուղեբեռի սպասարկման ծառայություն	+	+	+	+				
34.	Հյուրերի ուղեբեռի պահպանությունը, ինչպես նաև համարը զբաղեցնելու ընթացքում հյուրերի դրամական միջոցների և թանկարժեք իրերի պահպանությունը գործում է շուրջօրյա	+	+	+	+	+	+		+
35.	ա) տարադրամի փոխանակում  Պահանջը պարտադիր չէ *** այն օբյեկտներին, որոնցից առավելագույնը 100 մ հեռավորության վրա տարադրամի փոխանակման կետ կա  բ) բանկային պլաստիկ քարտերի սպասարկում օբյեկտի ամբողջ տարածքում	+	+	+	+				
36.	Հյուրերի ցանկությամբ մամուլի մատակարարում կամ հասանելիություն	+	+	+	+				
37.	ա) առաջին օգնության հնարավորություն, շտապ օգնության կանչ, դեղարկղիկ  բ) առողջարանի պրոֆիլին համապատասխան գործունեություն	+	+	+	+	+	+		+
38.	Համարում սննդի մատուցման սպասարկումը կատարվում է  1) շուրջօրյա  2) առնվազն 12 ժամ	+	+						
39.	Հանրային սննդի ծառայություններ  1) առնվազն օրը 3 անգամ սննդի ապահովում (նախաճաշ, ճաշ, ընթրիք)  Ելնելով առողջարանի առանձնահատկություններից՝ դիտարկ սննդակարգ  2) բար կամ ակումբային սրահ  3) նախաճաշի մատուցում համարներում՝ հյուրերի ցանկությամբ			+		+	+		+
40.	1) Հանգստյան գոտիներում հյուրերի անձնական մարզական գույքի պահպանում  2) լողավազան, շոգեբաղնիք, սոլյարի, մերսում և այլ վերականգնողական ծառայություններ (ծառայության առնվազն 2 տեսակ)	+		+		+			
41.	Հանրամատչելի տեղերում հեռուստացույց դիտելու հնարավորություն					+	+		+
42.	Հյուրերի սպիտակեղենի և հագուստի լվացք, արդուկ և մաքրման ծառայություն	+	+						
43.	Անկողնու և սրբիչների փոխելը նորով՝  1) ամեն օր կամ հյուրերի ցանկությամբ  2) 3 օրը մեկ կամ հյուրերի ցանկությամբ  VI. Անձնակազմի մասնագիտական որակավորում կրթություն	+	+						
44.	Հյուրանոցային օբյեկտի ղեկավարը պետք է ունենա՝  ա) բարձրագույն կրթություն, կամ՝ բ) միջին մասնագիտական կրթություն հյուրանոցային գործի բնագավառում գ) մասնագիտական դասընթացի որակավորում հյուրանոցային գործի բնագավառում, կամ՝ դ) 5 տարվա վարչական աշխատանքային փորձ հյուրանոցային գործի բնագավառում	+	+						
45.	Ընդունման սրահի անձնակազմ  1. Կրթությունը  ա) բարձրագույն կրթություն, կամ բ) միջին մասնագիտական կրթություն հյուրանոցային գործի բնագավառում  գ) միջնակարգ կրթություն և մասնագիտական դասընթացի որակավորում (առնվազն 60 ժամ), կամ դ) հյուրանոցային գործի բնագավառում 2 տարվա աշխատանքային փորձ  2. Առնվազն 2 օտար լեզվի տիրապետում՝ անգլերենը պարտադիր								
		+	+	+	+				

46.	Մատուցողներ, համարների սպասավորներ, դռնապան, բեռնակիրներ`	+	+	+	+				
	1) միջին մասնագիտական կրթություն կամ մասնագիտական դասընթացի որակավորում	+	+	+	+				
	2) առնվազն 2 օտար լեզվի տիրապետում` տարրական ծավալով` անգլերենը պարտադիր	+	+	+	+				
	VII. Այլ պահանջներ								
47.	Օբյեկտի յուրաքանչյուր ծառայության անձնակազմի համար առանձին համազգեստ	+	+	+					

**Նշանների և հապավումների բացատրություն`**

</>	հյուրանոցատիպ հանգրվան
Ա	մոթել
*	մեկ աստղանի կարգ
**	երկու աստղանի կարգ
***	երեք աստղանի կարգ
****	չորս աստղանի կարգ
+	պարտադիր պահանջ
բ/մ	բնակելի միավոր
ս.հ.հ	սանիտարահիգիենիկ հանգույց
-1/	մեխանիկական օդափոխումը պետք է ապահովի ամբողջ օբյեկտի օդափոխությունը` զործող պահանջներին համապատասխան, ինչպես նաև հոտերի կլանումը
-2/	թույլատրվում են երկֆունկցիոնալ տարրեր

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թվուզյան**

Հավելված N 4  
ՀՀ կառավարության 2004 թվականի  
հունիսի 10-ի N 946-Ն որոշման

**Կ Ա Ր Գ**

**ՀԱՆՁՆՑԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**

N/N ը/կ	Նվազագույն պահանջները	Կարգերը		
		I	II	III
1	2	3	4	5
1.	Օբյեկտը հանդիսանում է առանձին շինություն կամ շինության առանձնացված մաս	+	+	
	Օբյեկտը հանդիսանում է առանձին շինություն կամ շինության առանձնացված մաս: Թույլատրվում է, որ բնակելի մասը գտնվի առանձնացված մասնաշենքերում`			+

հաճախորդներին օբյեկտի բոլոր ծառայությունները հասանելի դարձնելու պայմանով:			
I. Արտաքին բարեկարգման տարրեր			
2. Ղեկի ընդունելության նախասրահ տանող ուղղակի մուտք, որը պետք է պաշտպանված լինի սառը օդի ներխուժումից	+	+	
3. Մատակարարման համար առանձնացված ճանապարհ	+		
4. Օբյեկտի շրջակայքը պետք է լինի բարեկարգված, պետք է ունենա ավտոմեքենաների և հետիոտների համար կոշտ ծածկով ճանապարհներ և արահետներ, դեկորատիվ կանաչապատում ու կանաչ գոտի՝ համապատասխան արտաքին լուսավորությամբ: Օբյեկտի շրջակայքում տնտեսական մասի առկայության դեպքում այն պետք է առանձնացված լինի հյուրերի համար հասանելի մասից:	+	+	
5. Հսկվող ավտոտնակներ կամ ավտոկայանատեղեր	+	+	
II. Տեխնիկական սարքավորումներ և հարմարանքներ			
6. 1) օդակարգավորում կամ այլ սարքավորումների և համակարգերի միջոցով՝ օդափոխության, օդի 18-21 <sup>0</sup> ջերմաստիճանի և 45-60 % խոնավության ապահովում և պահպանում ընդունելության սրահում, հասարակական սննդի ոլորտի և բազմաֆունկցիոնալ դահլիճներում	+	+	
7. Բնակելի մասում - բ/մ՝			
Օդակարգավորում կամ այլ սարքավորումների և համակարգերի միջոցով՝ օդափոխության, օդի 18-21 <sup>0</sup> ջերմաստիճանի և 45-60 % խոնավության ապահովում և պահպանում	+	+	
8. 1) Արտաքաշող մեխանիկական օդափոխում ս.հ.հ-ում: III կարգի օբյեկտներում թույլատրվում է զրավիտացիոն օդափոխում, եթե ս.հ.հ-ները ապահովված են կենտրոնացված տաք օռամատանառամամբ:	+	+	+

	ունեն պատուհաններ կամ ս.հ.հ-ի խցիկի ծավալը գերազանցում է 6,5 լս/մ-ը:			
	2) հանրամատչելի մասում՝ մեխանիկական օդափոխում 1/		+	+
	3) հանրամատչելի մասում մեխանիկական 1) կամ գրավիտացիոն օդափոխում			+
9.	Ջեռուցում ամբողջ օբյեկտում կամ դրա չօդակարգավորվող մասում	+	+	+
10.	Գործող պահանջներին համապատասխանող որակի տաք և սառը ջրի շուրջօրյա ջրամատակարարում	+	+	+
11.	Տարածքների բնույթին հարմարեցված ներքին լուսավորություն	+	+	+
12.	Հյուրերին հասանելի հեռախոս և ֆաքս ընդունելության սրահում	+	+	+
13.	Ուղի-հեռուստատեսային սարքավորումներ՝ հարմարեցված տեղական և արբանյակային ծրագրերի ընդունման համար	+	+	
14.	Մարդատար վերելակներ			
	1) զրո հարկից ցածր հարկերում գտնվող բոլոր սպասարկման տարածքներում (ավտոտնակներ, կենսավերականգնողական համալիր)	+		
	2) մեկ հարկից բարձր շինությունում՝ հյուրերի համար նախատեսված մասում	+		
	3) երկու հարկից բարձր շինությունում՝ հյուրերի համար նախատեսված մասում	+		
